ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

22.10.2019
343-44

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար
պարոն Էդուարդ Աղաջանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Աղաջանյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ո՞վ է Ձեր գերատեսչությունում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը (խնդրում ենք նշել անունը, ազգանունը, իր հետ կապի միջոցները),

2. Կառավարության պաշտոնական կայքում «Տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու» հիպերհղումը տանում է դեպի Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման վարչության պետի գործառույթները նկարագրող էջ, որտեղ, սակայն տեղեկատվության ազատության մասին որևէ խոսք նշված չէ, ինչը, սակայն, օրենքի պահանջ է: Տեղադրվա՞ծ է արդյոք Տեղեկատվության ազատության պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը պաշտոնական կայքի այլ այլ հատվածում: եթե այո, ապա խնդրում ենք նշել հիպերհղումը:

3. Խնդրում ենք տրամադրել այն իրավական ակտի պատճենը, որով նշանակվել է տեղեկատվության ազատության պատասխանատու անձը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝ Շուշան Դոյդոյան

ԻԱԿ նախագահ